

**Մոնթրեալի Հայաստան Համահայկական Հիմնադրամի շքահանդեսին ընթացքին հանգանակուեցաւ 60,000 տոլար**

**Հայ Դատի յանձնախումբը Գանատայի խորհրդարանի անդամ Տան Ռումիի հետ արծարծեց Արցախի հիմնահարցը**

**Վախճանեցաւ Պոլսոյ Հայոց Պատրիարք Մեսրոպ Արք. Մուրաֆեանը**



Կարդալ էջ 5



Մարտ 7ին, Հ.Յ. Դաշնակցութեան ՀՅԴ Բիւրոյի անդամ Բաֆֆի Տոնպետեան, Գանատայի Հ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէի անդամ Վահէ Անտոնեան, Հայ դատի յանձնախումբի Արեւմտեան Գանատայի շրջանի ատենապետ Յակոբ Տէր Յակոբեան եւ Վահիկ Յակոբեան հրաւիրուած էին ներկայ գտնուելու Գանատայի խորհրդարանի իշխող Ազատական կուսակցութեան անդամ պատգամաւոր Տան Ռումիի հանրահաւաքին, ուր ընկերները առանձնազորոյցներ ունեցան երիտփոխանին հետ: Արցախի հարցի հարցին նիւթին շուրջ Ռիումի խոստացաւ Հայ Դատի յանձնախումբի պատրաստած Արցախի հիմնահարցի ծրարգիրը ուսիմնասիրել յանձնարարելու հետ կրկին հանդիպել:



8 մարտ 2019-ին վախճանեցաւ Պոլսոյ պատրիարքական աթոռի 84-րդ գահակալ Մեսրոպ Բ. պատրիարք հայրը: Այս առիթով Պոլսոյ պատրիարքութեան հրատարակած յայտարարութեան մէջ կը նշուի, որ պատրիարք հայրը աւելի քան տասը տարի անդործութեան մատնուած էր անդարմանելի հիւանդութեան պատճառով: Մեսրոպ պատրիարքը 14 հոկտեմբեր 1998-ին ընտրուած էր Պոլսոյ հայոց պատրիարք՝ յաջորդելով Գարեգին Բ. պատրիարքին, որուն անմիջական գործակիցը հանդիսացած էր: Նախքան պատրիարք ընտրուելը, իր հոգեւոր ծառայութիւնը կեդրոնացուցած էր հոգեւորականներ պատրաստելու գործին վրայ, եւ այդ ծառայութեան գիրը շարունակուած էր նաեւ իր պատրիարքութեան շրջանին:

## Զօրավիգ կանգնինք Թորոնթոյի մեր կրթութեան տաճարին

«Հայրենապաշտական հասարակութիւնը պէտք է լինի մեր փրկութեան խարիսխը, հայ դպրոցը պէտք է վերածուի հայրենագիտութեան տաճարի»:

**Գարեգին Նոյնի**

Հայոց Յեղասպանութեան յաջորդող ժամանակահատուածին, տարասփիւռ հայկական գաղթօճախներուն մէջ, հայ վարժարաններուն վիճակուած էր ազգային եւ հոգեւոր արժէքներով կրթել սերունդները եւ կերտել գաղափարապաշտ եւ ազգային իր պատկանելիութեան գիտակից հայ երիտասարդութիւն:

Սփիւռքի իրերայաջորդ սերունդներուն գոյատեւելիութեան մէջ անժամանցելի գերակատարութիւն ունեցած է Հայրենիք, Ազգ եւ եկեղեցի երրորդութիւն գաղափարախօսութեան տարածումն ու ամրագրումը եւ այդ ազգային հասկացութիւնը գործնականորէն հայ նորահաս սերունդին ջամբող կուռանը՝ հայ դպրոցն է:

Այսօր, համաշխարհայնացման պատճառով նոր մարտահրաւէրներու դէմ յանդիման կը գտնուի հայ վարժարանը, յատկապէս սփիւռքի կրթական ոլորտին մէջ, որպէս հայապահպանման գլխաւոր բաղադրիչ

գործօն, անհրաժեշտ է, որ գերակայ ուշադրութեան արժանի դառնայ հայեցի դաստիարակութիւնը:

1979-ին, Թորոնթոյի մէջ, Հայ Օգնութեան Միութեան եւ Գոլդեան ընտանիքի բարերարութեան շնորհիւ հիմը դրուեցաւ Ամէնօրեայ վարժարանին, որուն շուրջ համախմբուած կրթական մշակներու եւ ազգային գործիչներու տքնաջան աշխատանքին իբրեւ արդիւնք՝ 69 մատղաշ աշակերտներով սկիզբ առած կրթական այս առաքելութիւնը՝ այսօր հպարտութեամբ իր մէջ կը պարփակէ 600 աշակերտներ:

Այս օրերուն վարժարանը իր ամէնամեայ թելեթոն նուիրահաւաքը կը կազմակերպէ: Թորոնթոյի ամէնօրեայ վարժարանի հիմերը ամրագրելու համար, Սփիւռքի մէջ կրթական այս անզուգական հիմնարկը կարիքը ունի իր հայրենակիցներու նիւթական անմիջական գորակցութեան, որովհետեւ այդ յարկին տակ է, որ հայ աշակերտը իր մասնագիտական կարողութիւնները եւ հմտութիւնները պիտի զարգացնէ, հիմք ընդունելով ազգային դաստիարակութեան չափորոշիչները: Աւելին՝ այսօրուան բարձրագոյն կրթութեամբ զարգացած սերունդը՝ Սփիւռքի կառոյցներու ամրապնդման ուղղութեամբ, ի՛նք պիտի իրականացնէ եւ իրագործէ համա-

կարգուած եւ նպատակաւորուողուած հայապահպանման քաղաքականութիւն:

Հայապահպանութիւնը այսօր չի կրնար ինքնահայեցի եւ ինքնանպատակ ըլլալ. սփիւռքահայութեան գանգուածներու հեռակայ նպատակը՝ սեփական հայրենիքին մէջ վերամիաւորման տեսլականն է եւ այդ գերագոյն իտէպիլին համար՝ Թորոնթոյի կրթական մարտկոցէն թրծուող սերունդները գործած են գիտակից եւ տեսլապաշտ, յանուն հայրենիքին, Հայ Դատին եւ հայոց պահանջատիրութեան, որովհետեւ այդ համայնական գոյապայքարին մէջ իւրաքանչիւր շրջանաւարտ եւ աշակերտ լաւապէս ըմբռնած է, որ երդմնագանցութեան համագոր է հրաժարիլ ազգի գերագոյն ուխտէն:

Իր կրթական առաքելութեան գիտակից՝ Թորոնթոյի հայապահպանման ամրոցը իր աշխարհըմբռնման մէջ ներառած է ազգային արժէքներու համակարգը եւ տարիներէ ի վեր աշակերտութեան մէջ սերմանած է ազգային ինքնաճանաչման արժէքները՝ հայոց լեզուն, մշակոյթը, պատմական յիշողութիւնը եւ ազգային մտածողութիւնը:

«Հորիզոն»  
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

**2018 PILOT** MSRP STARTING FROM \$40,390\*

**HONDA GABRIEL**

7000, boulevard Henri-Bourassa E.  
Montréal-Nord, QC H1G 6C4  
**514 327-7777**  
www.hondagabriel.com

Kevoak Asadourian  
Vahan Vartanian  
Haig Khobassarian

**HONDA**



**Ghadir**  
Meat & Restaurant

Մեր յարգոյ յաճախորդներուն կը տեղեկացնենք, թէ GHADIR մսավաճառատունն ու ճաշարանը փոխադրուած է աւելի ընդարձակ եւ յարմարաւէտ կեդրոն մը՝ նորագոյն եւ լաւագոյն ձեւով ծառայելու մեր յաճախորդներուն:

Մեր ճաշարանէն ներս կը սպասարկուին միջին արեւելեան զանազան ճաշատեսակներ, օրինակ՝ մենէիշ, պանիրով պէտրէկ, հաւու եւ կովու միսով շաուրմա, հաւու եւ կովու միսով խորոված, մսաշոթ, չի բօֆթէ, լման հաւու խորոված, սուճուխ եւ այլ տեսակի աղանդերներ:

**ՆՈՐ ՀԱՍՅԷ՝**  
1848 Lawrence Avenue East  
Scarborough, Ontario M1R 2Y4

**ՀԵՌԱԶԱՅՆ՝**  
(416) 750-7404 կամ (416) 750-7400



**NEW! Fresh, fried and charcoal grilled fish – Dine in or Take out**

# Համազգայինը Կը Պահպանէ Իր Հիմնադիրներուն Պատգամը (Բ.)

Ստորեւ կը ներկայացնենք Լիբանանի մէջ կազմակերպուած Համազգայինի 90-ամեակի ձեռնարկին Համազգայինի կեդրոնական վարչութեան ատենապետ Մկրտիչ Մկրտիչեանի խօսքին երկրորդ եւ եզրափակիչ հատուածը:

Համազգայինը Սփիւռքի մէջ հայկական ինքնութիւնը կարելիութեան սահմաններուն մէջ պահպանելու կոչուած կառոյց էր, այնպիսի պայմաններու մէջ, ուր հայրենիքը աշխարհացրիւ հայկական զանգուածներուն հետ անաչառ գրադելու կամք էր գրադելու: Սկզբնական շրջանին մանաւանդ՝ Խորհրդային Հայաստանի իշխանութիւնները կը մերժէին համահայկական իրենց պարտաւորութիւնները:

Համազգայինը անկախ Հայաստան մուտք գործեց համատ Թրաքիոյն որով, ունեցաւ իր գրասենեակը, սակայն չունեցաւ կազմակերպական կառոյց: Պատճառը յստակ էր. Հայաստանը հայրենիք էր, ուր գոյութիւն ունէր կրթական նախարարութիւն, մշակութային նախարարութիւն. աւելի ուշ նաեւ՝ Սփիւռքի նախարարութիւն: Այս ձեւով հայրենի հողի վրայ Համազգայինի ներկայութիւնը, որպէս հասարակական կազմակերպութիւն, բոլորովին աւելորդ պէտք էր նկատել: Ի՞նչ աւելի կրնար ընել Համազգայինը, քան՝ պետական կառոյցները:

Այսօր սակայն Սփիւռքի նախարարութիւն գոյութիւն չունի, մշակոյթի նախարարութիւնը որպէս անջատ միաւոր՝ նոյնպէս: Վերջինս մէկ մարմին կը կազմէ կրթական նախարարութեան հետ. Սփիւռքի հարցերով պիտի գրադի, կ'երեւի, վարչապետարանին կապուած գրասենեակ մը: Այս փոփոխութիւնները Սփիւռքի եւ մշակոյթի կարեւորութեան անցեալի տարբեր արժեւորումով մը կը մեկնաբանուին՝ անխուսափելիօրէն: Մանաւանդ՝ որ Հայաստանի նմանող երկիրներ յատուկ կարեւորութիւն կ'ընծայեն այս նախարարութիւններուն:

Յրանսայի մէջ մշակոյթի նախարարութիւնը անհրաժեշտ նկատուեցաւ Շարլ Ծը Կոլի կողմէ, իսկ Յունաստանի մշակոյթի նախարարութիւնը երկրի ամենէն ուժեղ գերատեսչութիւններէն մէկն է. անկէ կը սարսափին մեծաթիւ յունական քաղաքներու քաղաքապետարաններու շինարարական աշխատանքներուն կապուած գրասենեակները: Աթէնքի ողիմպիական խաղերու առիթով կառուցուած մեթրոյի փապուղիները քաղաքի կեդրոնական շրջանին մէջ բացուած են, կ'ըսեն, մուրճով եւ վրցիւնով. կայարաններու մէջ կը ցուցադրուին չճարգրուած ու ակամայ պեղումներու ընթացքին

երեւան եկած հնագրեան իրերու նմանակները:

Իսկ Հայաստանը նոյնպէս բացօթեայ թանգարանի համբաւ ունի: Աւելին՝ անոր մշակոյթը ենթակայ է հօր, յաճախ անորակ օտար մշակութային ազդեցութիւններու: Հայկական մշակոյթը այսօր պաշտպանի պէտք ունի այդ ճնշումներուն դիմադրել ու զարգանալ կարենալու համար: Մշակութային պետական կառոյց մը ամենէն ուժեղ միջոցն է այդպիսի գործ մը գլուխ հանել կարենալու համար:

Մեր օրերուն, միջազգային բեմի վրայ, մշակոյթի ոլորտը ուրիշներու կարգին նոյնպէս կը պատկանի տնտեսական ոլորտին: Առեւտուրի միջազգային կազմակերպութեան ծիրէն ներս տեղի ունեցած բանակցութիւններու ընթացքին Ֆրանսայի ներկայացուցիչները երկար պայքարեցան մշակոյթը տնտեսական քանդիչ պայմանագրութիւններէ գերծ կացուցանելու համար: Անոնք յաջողեցան, սակայն՝ միայն... Ժամանակաւոր կերպով:

Կարելի է վստահ ըսել, որ ազատ շուկայի վրայ հայկական մշակոյթը դատապարտուած է լուրջ կերպով աղաւղուելու: Միայն չհասկցուելու համար անմիջապէս ըսենք, որ ջատագովը չենք մշակութային պահպանողական քաղաքականութեան մը: Գիտենք, որ մշակոյթը վերապրել կարենալու համար պէտք ունի արդիական շուկայի, պէտք ունի տեւաբար նորոգուելու՝ ապրելու. սակայն երբեք՝ հիմնովին ալյաւերելու: Ան իսկապէս պէտք ունի պաշտպանուելու աւելորդ ու անտեղի նորարարութիւններէ:

Ներկայի պայմաններու մէջ կրնայ ըլլալ, որ հայրենիքը նոյնպէս պէտք ունենայ Համազգայինի նման ոչ պետական մշակութային կառոյցներու: Մօտաւոր ապագան ատիկա ցոյց կու տայ:

Բազմասպարէզ Կրթութեան, գիտութեան – մշակոյթի նախարարութեան հիմնական ոլորտը կրթութիւնն է: Ներկայ նախարարը նախորդ ժամանակաւոր կառավարութեան կրթական նախարարի պաշտօնակատարն էր: Ատենին յայտարարած էր, թէ աշակերտներուն եւ ուսանողներուն համար նախատեսուած ռազմահայրենասիրական դաստիարակութիւնը կրթական ծրագրի մէջ պէտք է վերցուի: Ի՞նչ է ռազմահայրենասիրական դաստիարակութիւնը, որ այնքան անապարհօք պէտք է վերցնել կրթական ծրագրէն մոռնալով, որ Հայաստան իր շուրջ իր տարրական իրաւունքները ոտնակոխ ընելու պատրաստ գրացիներ ունի: Ի՞նչ պէտք է գեղըրի կրթական ծրագրից. Հայոց ազգային պատմու-

թիւնը, հայոց դիցարանութեան պատմութիւնը, դիւցազնավէպի ծանօթացումն ու վերլուծումը, հայրենասիրական երգերը, հայ ազատագրական պայքարի հերոսական գրուագներու, անոր յաջողութիւններու, ճախողութիւններու, անոր պատճառած խանգարումներուն եւ ընկրկումներու, հայ ժողովուրդի մահուան եւ հրաշափառ յարուածեան պատմութիւնը: Այսպիսի կրթական ծրագիր ոչինչ ունի ազգայնական ու ազգայնամոլական, այլ՝ մեր օրերուն մանաւանդ պատմական անհրաժեշտութիւն է: Ինչպէս ակնկալելի էր, ներկայ կառավարութեան հրապարակած հնգամեայ ծրագրին մէջ ազգային դաստիարակութիւն եզրը գոյութիւն չունի: Իսկ երկիրը չըջապատուած է ինքզինքնին ատենին փաստած եւ ամէն նոր օր կրկին նոյն ուղղութիւնը բացայայտող յայտարարեալ թշնամիներով, որոնք ամէն առիթ կ'օգտագործեն բարձրաձայն յայտարարելու հայութեան դէմ իրենց ճիշտագոյն տրամադրութիւնները: Առիթ չեն փախցնել ըսելու, թէ հայոց մայրաքաղաքը հայերուն չի պատկանիր, թէ Արցախը հայերուն կողմէ բռնագրաւուած հողատարածք է: Իսկ միւս կողմէն՝ Թուրքիոյ մէջ, Աթաթուրքէն ի վեր եւ մինչեւ այսօր, սերունդները ազգայնամոլ գաղափարաբանութեան վրայ հիմնուած, յատկապէս՝ հայատեսաց դաստիարակութեամբ տոգորուած են: Այսպիսի պայմաններու առկայութեան Հայաստանի մէջ բարի ու խաղաղութեան նշանաբաններու երկրպագու սերունդներ հասցնելու հաւաքական անձնասպանութեան համագործ է:

Վերջին տարիներու ընթացքին Համազգայինը այս մարզէն ներս համբերութեամբ քաջալերած է հայոց ազատագրական պայքարի ճանաչողութիւնն ու անոր կարեւորութիւնը փոխանցելու աշխատանքները: Ընդ թափուած է մանաւանդ մուլթի մէջէն արեւու լոյսին բերելու այդ պայքարի հերոսական անունները, որպէսզի անոնք օրինակ դառնան նոր սերունդներուն: Ընդ թափուած է հանրութեան ծանօթացնելու Հայաստանի առաջին հանրապետութեան ղեկավարութեան բարոյական ընդօրինակելի տիպարները, որոնք յիշատակումը նոյնիսկ պոկուած է մարդոց ուղեղներէն խորհրդային շրջանին: Մէկէ աւելի անգամներ դիմումներ կատարուած են պաշտօնատար մարդոց մօտ տասնամեակներ շարունակ անտեսուած ու անիծուած, սեւ ցանկերու վրայ մոռցուած փառաւոր անուններու վերարժեւորումը. այսօր Արամ Մանուկեանի, Դրոյի, Ալեքսանտր Սատիսեանի, Սիմոն Վրացեանի եւ ուրիշ շատ-շատերու տիպարներ


ընդօրինակելի ընդդէմ են երիտասարդութեան համար:

Մէկ խօսքով՝ ազգային գաղափարախօսութեան վրայ հիմնուած կրթութիւնը Հայաստանի աշխարհաքաղաքական կացութեան թելադրուած անհրաժեշտութիւն է, ազգային անվտանգութեան հիմնական հարց է: Ներկայ պայմաններու մէջ գերազատական տնտեսականութեան վրայ հիմնուած բոլոր նախաձեռնութիւնները, կամայ թէ ակամայ, կը ծառայեն այլոց շահերուն՝ անկախ այն իրողութեան, որ տնտեսական ազատականութեամբ համաշխարհայնացումը ահա տասնամեակէ մը ի վեր իր ճախողութիւններուն մէջ կը տապալակի. ան դարձած է յատկապէս փոքր ժողովուրդներու դժբախտութեան պատճառ՝ աշխարհը նետելով վտանգներով լի անորոշութեան գիրկը: Մեզի համար կրթական մարզէն ներս ալ կը դրուի հարցականը. արդե՞ք հասած է ժամանակը Համազգայինի հիմնադրներու տեսլականը հայրենիքէն ներս ալ գործօն ձեւով տարածելու:

Այսպէս՝ 90ամեայ Համազգայինը ունի իր յիշարժան հերոսական անցեալը, ներկայի արդիականացման գործընթացը, եւ տեսլաբար կը մտածէ ապագայի իր հաւանական ընկերներուն մասին: Գաղափարականութիւնը կը մնայ իր հիմնական յատկանիշներէն մէկը: Այդ ձեւով բացատրելի է նաեւ իր անդամներու եւ գործիչներու անշահախնդիր կամաւորականութիւնը: Կասկած է վեր է նաեւ, որ այնտեղ ուր անհրաժեշտ եղած է, երկարատեան է ի վեր մուտք գործած է արհեստավարժութիւնը: Համազգայինի մէջ կամաւոր աշխատանքի արդիւնքը յաճախ կը մրցի արհեստավարժ միտքի ու ձեռքի արդիւնքներուն հետ: Աշխարհասփիւռ Համազգայինը հայ ժողովուրդի բոլոր խաւերէն ներս աշխատելով դեռ կը պահէ իր հիմնադրներէն ժառանգ մնացած պատգամը. ամէն ճիշտ թափել օտար փերու վրայ պահելու համար հայոց լեզուն, հայկական մշակոյթը՝ անոր ճամբով իր լուծման բերելով նաեւ Հայ Դատի ուղղութեամբ համահայկական ճիգին: Մշակոյթը պահպանել՝ դայն զարգացնելու եւ արդիականացնելու պայմանով, որպէսզի ան ընկալուի նաեւ իր ժամանակին մէջ ապրող նոր սերունդին կողմէ:

Ասիկա՝ է յաւիտենականութիւնը ապահովելու հիմնական երաշխիքներէն մէկը:

Մկրտիչ Մկրտիչեան



**ՊՈԼՍԱՐԱՅ ԳԻՄՆԱՐԿ  
FONDATION BOLSAHAY**

**ՊՈԼՍԱՐԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ**

Մեծարանքի երեկոյ պրն. Հերման Օտապաշեանի, առ ի գնահատանք Պոլսահայ Մշակութային Միութեան երդիքին տակ իր տարած բազմամեայ բեղուն մշակութային գործունէութեան:

**Տեղի կ'ունենայ Կիրակի, 31 Մարտ 2019-ին, կ.է. ժամը 5:00-ին,**

վնութեան «Հրանդ Տինք» սրահին մէջ, հիւրասիրութեան սպասարկութեամբ:

Մուտքը ազատ է:

**Վարչութիւն Պ. Մ. Միութեան**



**ALINE BEKEREJIAN**

NOTAIRE • NOTARY

**ՆՈՏԱՐ ԱԼԻՆ ՊԵՐԵՐԵՃԵԱՆ**

|               |                   |                   |
|---------------|-------------------|-------------------|
| Achat         | Առեւտուր          | Purchase          |
| Hypothèque    | Ալշարժ Կայրածք    | Mortgage          |
| Refinancement | Վերաֆինանսաւորում | Refinance         |
| Mandat        | Պատուիր           | Mandate           |
| Testament     | Կտակ              | Will              |
| Succession    | Կայրածք           | Estate            |
| Marriage      | Ամուսնութիւն      | Marriage          |
| Procuration   | Փոխարկողագիր      | Power of Attorney |

180, rue Fleury ouest  
Montréal, Qc, H3L1T5

T 514.382.7222  
F 514.381.1818

aline.b@notarius.net  
www.abnotaires.com

Services offerts en Arabe, Arménien, Français et Anglais  
Services offered in Arabic, Armenian, French and English.

Ծառայութիւնները կը մատուցուին Արաբերէն, Հայերէն, Ֆրանսերէն, եւ Անգլերէն լեզուներով:

### Համազգային 90-ամեակի տոնակատարությունը Գեմպրիճի մէջ

Կիրակի, 17 Փետրուարին, Գեմպրիճի Հայ կեդրոնի «Փոստաճեան» սրահին ներս նշուեցաւ Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան 90-ամեակը Գեմպրիճի «Տաթեա» մասնաճիւղի վարչութեան կազմակերպութեամբ: Ներկայ էին Սուրբ Նշան Հայ Առաքելական եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժանապատիւ Տէր Կոմիտաս Ա. Քահանայ Փանոսեան, վերապատուելի Յովհաննէս Սարմազեան, Գեմպրիճի Հայ Աւետարանական եկեղեցւոյ հովիւ Արմէն Պէրճեան, յարակից միութիւններու վարչութիւններ եւ շուրջ 50 ներկաներ:

Մասնաճիւղիս ատենապետ ընկ. Սամուէլ Մովսիսեան իր բարի գալուստի խօսքէն ետք, ներկայացուց օրուան պատգամաբերութիւնը՝ Համազգային Գանատայի Շրջ վարչութեան անդամ ընկերուհի Մեղեգի Էթիէմէզեանը:

Բեմ հրաւիրուելով ընկերուհի Էթիէմէզեան խտացուած կերպով ներկայացուց Համազգայինի 90 տարիներու գործունէութիւնը, սկսելով 1928-էն, երբ խումբ մը մտաւորականներ կը հիմնեն այս միութիւնը Գահիրէի մէջ, ցեղասպանութենէն վերապրողներու հայապահպանման եւ նոր սերունդին հայեցի դաստիարակութիւն տալու նպատակաւ, կրթական հրատարակչական եւ արուեստի տարբեր միջոցներով: Այսպիսով 1930-ին կը հիմնուի Պէյրութի Ճեմարանը, 1931-ին տպարանը եւ 1962-ին «Բազին» գրական հանգէսը:

Անկէ ետք ցուցադրուեցաւ տեսերիզ մը՝ պատրաստուած 90-ամեակի առիթով, ապա տեղի ունեցաւ գեղարուեստական յայտագիր: Ընկերուհի Թալին Նորանեան նախ արտասանեց Ե. Չարենցի «Գովք Հայաստանի»-ն, որմէ ետք Համազգայինի լաւրային նուագախումբի 4 անդամները ջութակով նուագեցին 3 մեղեդիներ, զեկավարութեամբ՝ տիկ. Կարինէ Գարեհազուպեանի:

Չեռնարկի աւարտին տեղի ունեցաւ հիւրասիրութիւն, որուն ընթացքին ներկաները առիթով ունեցան զիտելու 3 երիտասարդ արուեստագէտներու նկարները: Լիլիթ Մովսիսեանի, Մանէ Գարեհազուպեանի եւ Նուպար Գարեհազուպեանի:

Կ. Հանգէշեան

### Թորոնթոյի մէջ սկիզբ առաւ Ազգային Առաջնորդարանի կազմակերպած «Երիտասարդական Լուսարձակ» հանդիպումը

Հինգշաբթի, 7 Մարտ 2019-ին, Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Բարբէն Արքեպիսկոպոս Չարեանի նախաձեռնութեամբ սկիզբ առաւ Ազգային Առաջնորդարանի կազմակերպած «Երիտասարդական Լուսարձակ» հանդիպումը, որ կը կրէր «Հիմա է մեր ժամանակը, եկէ՛ք գրուցենք» խորագիրը: Հանդիպման առաջին կանգառը Թորոնթո էր: Նշենք, որ այս ծիրին մէջ, Առաջնորդ Սրբազանը պիտի շրջի Թեմիս գանազան համայնքները եւ հանդիպումներ պիտի ունենայ երիտասարդութեան հետ, պիտի լսէ անոնց դժուարութիւնները, գրուցէ անոնց հետ եւ հաւատքի պարունակին մէջ՝ թելադրութիւններ ընէ անոնց, առօրեայ մարտահրաւէրները յաղթահարելու համար:

Թորոնթոյի հանդիպման առաջին բաժնով, Առաջնորդ Սրբազանը շեշտեց երիտասարդութեան կարեւորութիւնը մեր թեմի հաւաքական կեանքին մէջ, նշելով որ կը գիտակցի ներկայ ժամանակներու պարտադրած դժուարութիւններուն, սակայն ի՛նչ ալ որ ըլլան պայմանները, մենք պարտաւոր ենք հաւատարիմ մնալ մեր հոգեւոր եւ ազգային արժէքներուն, աղօթքը դարձնել մեր վերջերուն բալասանը, ըլլանք օրինակելի հայեր ու քաղաքացիներ, գուրգուրանք մայրենի լեզուին, հաւատարիմ գաւակները ըլլանք մեր Ս. եկեղեցւոյ եւ կառչինք մեր քրիստոնէական հաւատքին:

Ապա, երիտասարդները քրիստոնէական դաստիարակութեան, ինքնութեան պահպանման, մեր եկեղեցւոյ դերակատարութեան, արդի արհեստագիտութեան, ընկերային ցանցերու գործածութեան, երիտասարդները ազգային-եկեղեցական կեանքին հետ առնչելու դժուարութիւններուն եւ քրիստոնէական աստուածաբանութեան հետ առնչութիւն ունեցող հարցադրումներ կատարեցին, որոնց Առաջնորդ Սրբազանը տուաւ սպառնիչ պատասխաններ:

Աւարտին տեղի ունեցաւ հիւրասիրութիւն, որուն ընթացքին երիտասարդները մտերմիկ գրոյց ունեցան Բարբէն Արքեպիսկոպոսին հետ եւ անհատական հարցումներով իրենց միտքերը չարչրկող հարցերուն յաւելեալ լուսաբանութիւններ ստացան:

Առաջնորդ Սրբազանը գնահատեց երիտասարդները, որոնք օտար ափերու մէջ լծուած են հայակերտման ու քրիստոնէական հաւատքի պահպանման նուիրական առաքելութեան:

Նշենք, որ «Երիտասարդական Լուսարձակ» շրջապտոյտի երկրորդ կանգառը պիտի ըլլայ Մոնթրէալը, Հինգշաբթի, 2 Մայիս 2019-ին:

**Voyages HAIG Travel**

Ձեր բոլոր ճամբորդական Կարիքներուն համար հեռաձայնել՝ **(514) 284-7676**

**ՅԱՏՈՒԿ ԳԻՆԵՐ ԴԷՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ...**

**ԼԱՒՍԳՈՅՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԱՐՄԱՐԱԳՈՅՆ ԳԻՆԵՐ**

**PERMIS DE QUÉBEC**

3438 Rue St-Denis, Montreal, QC H2X 3L3, Fax: 514-284-7677

**ՎԱՐՉՈՒ ՅԱՐԿԱՐԱԺԻՆ 3 1/2**

3 ½ -ւոց վարձու յարկաբաժին, Normandie շուկային մօտ, սառնարան, փուռ եւ լաուացքի մեքենայ ներառեալ:

Հետաքրքրուողները կրնան հեռաձայնել 514 334-9251 թիւին:

**RITA BAGHDASSARIAN**  
Conseillère en Sécurité Financière  
Revenu Garantie Viager

COMPTE D'ÉPARGNE LIBRE D'IMPÔT (CELI) • CRÉATION D'HÉRITAGE • REER, FERR, RENTE RETRAITE • PLAN D'ÉDUCATION-REÉÉ • ASSURANCE-VIE & HYPOTHÉCAIRE • ASSURANCE SALAIRE & COLLECTIVE • ASSURANCE DE PARTENARIAT

3820, boul. Lévesque Ouest, Bureau 101, Laval Qc. H7V 1E8  
Tél.: (450) 973-2822 • (514) 884-1117 • Fax: (450) 973-2262  
ritabagh@yahoo.com

**VIZUALIS**  
optométriste

**DR SHANT DONABEDIAN**

Centre d'Achat Fairview - Fairview Mall  
Pointe Claire  
514 695 2555 - VIZUALIS.CA

**Danièle Papazian, MSc.**  
Courtier immobilier  
C 514.234.6799  
dpapazian@remax-quebec.com  
www.remaxducartier.com

**RE/MAX DU CARTIER**  
Agence immobilière

1290, rue Bernard Ouest, bureau 100  
Outremont Qc H2V 1V9  
T 514.271.2131

**Assura Bien inc.**  
Cabinet en assurance de dommages et de services financiers  
Ապահովագրական գրասենեակ

**KRIKOR ABRAKIAN VAHAN MATOSSIAN**

970 Montée de Liesse, suite 306, Saint-Laurent, Qc. H4T 1W7  
T: 514.903.3999

**BOURQUE KABABEJIAN NOTAIRES**  
NOTAIRES ET CONSEILLERS JURIDIQUES  
Un rendez-vous avec le savoir-faire

**GEORGE KABABEJIAN, LL.B., J.D., D.D.N.**  
NOTAIRE ET CONSEILLER JURIDIQUE

465, RUE SAINT-JEAN  
BUREAU 801  
MONTRÉAL, QUÉBEC H2Y 2R6  
TÉLÉPHONE : 514 842-4181, POSTE 248  
FAX : 514 842-6808

**JACOB & JACOB**  
BODY SHOP  
CAS D'ASSURANCES

6280 St. Jacques, Montréal, Québec, H4B 1T6  
Tél: (514) 484 - 7945 Fax: (514) 484 - 2487  
jacobautobody@bellnet.ca www.carrosseriejacobetjacob.ca

**RE/MAX**  
RE/MAX 3000 inc.  
Agence immobilière

**Elie Berberian**  
Courtier immobilier | Real Estate Broker  
C 514.519.3543  
B 514.333.3000

**KORONA**  
JOAILLIERS • 1964 • JEWELLERS

**Daniel Torosian**

3933 St Martin O. Coin Curé-Labelle Laval, Qc.  
514-274-5555 | 450-688-5515 | korona.ca

**KRIKOR MAROUNIAN RLU**  
Independent Financial Security Broker

Life Insurance • Disability & Critical Illness Insurance  
Group Insurance • Pension Plans  
Travel/Visitor Medical Insurance

11820 General Giraud  
Montreal, QC H4J 2H6  
Res: (514) 332-7021  
Fax: (514) 332-7376  
Cell: (514) 927-2666  
krikormar@gmail.com

**FIVE STAR ELECTRIQUE**  
CINQ ÉTOILES

SPECIALIST IN DECORATIVE GARDEN LIGHTING  
RESIDENTIAL-COMMERCIAL

**BEDROS NALPATIAN**

442, LA RIVIÈRE, LAVAL, QC.  
TEL: 514-497-5155 FAX: 450-689-3997  
E-MAIL: ELECTRIC.FIVESTAR@GMAIL.COM

**CENTUM**  
Metropop Wealth Solutions Inc.  
License # 12147

Mortgage programs for new comers to Canada  
New purchases  
Refinancing  
Second mortgages  
Self employed  
Low credit score  
Access to top lenders including private lenders

**SOSIE DERNERSESSIAN**  
MORTGAGE AGENT  
LICENCE #M12001830  
716 Gordon Baker Road,  
Unit 204A, Toronto  
Ontario M2H 3B4

416.662.6650 cell  
centum.ca/sosie\_dernersesian

**ALINE BEKEREJIAN**  
NOTAIRE - NOTARY

180, rue Fleury ouest  
Montréal, Qc, H3L1T5  
T 514.382.7222  
F 514.381.1818  
aline.b@notarius.net  
www.abnotaires.com

Լուսար եւ Իրաւաբանական Խորհրդատու՝ Ալին Բեքերեճեան

# Մոնթրէալի Հայաստան Համահայկական Հիմնադրամի «Արմատներու ճայն» 2-րդ շքահանդէսին ընթացքին հանգանակուեցաւ 60,000 տոլար

Մոնթրէալի Հայաստան Համահայկական Հիմնադրամի «Արմատներու ճայն» 2-րդ շքահանդէսը տեղի ունեցաւ 2 Մարտ 2019-ին, Լաւալի Centre Armani սրահին մէջ, համա-նախագահութեամբ պրն. Մկօ Պալեանի եւ տիկին Շաքէ Կէօնճեանի: Ներկայ էին Լաւալի Սուրբ Խաչ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժանապատիւ Տէր Կոմիտաս Միրզախանեան, Սուրբ Գէորգ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Հոգեշնորհ Տէր Վարդան Վրդ. Թաշճեան, բարերարներ, կազմակերպութիւններու ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ շուրջ 300 հայորդիներ:

Թամար Փանոսեան, որ շատ հաճելի ձեւով կատարեց իրեն վստահուած հանդիսավարութեան պաշտօնը, իր բարի գալուստի խօսքէն ետք, բեմ հրաւիրեց Մոնթրէալի Հայաստան Համահայկական Հիմնադրամի ատենապետ պրն. Թովմաս Ֆրունճեանը՝ փոխանցելու իր խօսքը: Պրն. Ֆրունճեան իր գոհունակութիւնը յայտնեց, որ մոնթրէալահայութիւնը անգամ մը եւս անսպառնակ շնորհներով Հայաստան Հիմնադրամի հանգանակութեան կոչին՝ եկած է իր բարոյական եւ նիւթական ներդրումը բերելու եւ սատար կանգնելու Հայաստանի եւ Արցախի ժողովուրդի բարօրութեան գործին: Պրն. Ֆրունճեան տեղեկացուց, թէ 2019 թուականին Մոնթրէալի Հիմնադրամի վարչութիւնը որոշած է Երեւանի Նորք թաղամասի մանկական հիւանդանոցին նուիրել «խիստ օդափոխման համակարգ» (critical care ventilation system)՝ օժանդակելու համար հիւանդանոցին մէջ վարակիչ ախտերէ տառապող երեխաներուն դարմանումին: Սոյն համակարգը տրամադրելու համար անհարձակ է գոյացնել 40.000 ԱՄՆ տոլար: Պրն. Թովմաս Ֆրունճեան մեծ ուրախութեամբ յայտնեց նաեւ, որ 2018 Մայիսին Մոնթրէալի Հայաստան Համահայկական Հիմնադրամը ամբողջացուց Արցախի Ասկերան շրջանի Խանձք գիւղին մէջ կառուցուած համայնքային կեդրոնին ի



նպատ 220 հազար ԱՄՆ տոլարի վճարումը: Ձեռնարկին ընթացքին ներկաները առիթը ունեցան նաեւ տեսնելու նորակառոյց կեդրոնի շէնքի բացման արարողութեան տեսերիկը:

«Արմատներու ճայն» 2-րդ շքահանդէսը խանդավառելու համար կազմակերպիչ յանձնախումբը Հայաստանէն հրաւիրած էր սիրուած ու տաղանդաւոր երգիչներ՝ Սոնա Թուբէնեան եւ Վարդան Պատալեան: Մեծ եղաւ ներկաներուն խանդավառութիւնը՝ ունկնդրելով առաջին հերթին Պատալեանի սքանչելի-օրէն մեկնաբանած աշուղական, հայրենասիրական եւ քնարական երգերու շարքը, ապա բեմ հրաւիրուեցաւ Սոնա

Թուբէնեան, որ մեկնաբանեց բազմաթիւ երգեր, որոնց շարքին նաեւ իր յորինումներէն Արցախի, հայ գինուորին եւ մայրերու նուիրուած երգեր: Երկու երգիչները կատարեցին նաեւ զուգրգրներ: Շքահանդէսին գեղարուեստական յայտագրին իրենց մասնակցութիւնը բերին ճանչցուած ու տաղանդաւոր ասմունքող Շուշանիկ Մելքոնեան եւ «Գառնի» պարախումբը՝ դիկավարութեամբ պրն. Լուիսֆիլի Պուլզատարեանի:

Գեղարուեստական յայտագիրը իսկական վայելք մը եղաւ ներկաներուն համար: Տեղի ունեցաւ նաեւ վիճակահանութիւն: Տիկին Շողիկ Մարկոսեան հանդիսացաւ բախտաւոր հայուհին, որ իր

շահած նիւթական 750 տոլար պարգեւը վեհանձնօրէն նուիրեց հիմնադրամի դրամահաւաքին՝ Մոնթրէալի Հայ Աւետարանական եկեղեցւոյ անունով:

Հայաստան Համահայկական Հիմնադրամի «Արմատներու ճայն» 2-րդ տարեկան շքահանդէսը յաջողած էր իր շուրջ բոլորելու հայրենիքով մտահոգ ու հայրենիքի օգնութեան հասնելու պատրաստակամութեամբ տոգորուած երէց եւ երեստասար Հայորդիներ, որոնց բոլորին ջանքերով կարելի եղաւ գոյացնել 60.000 տոլար:

Տիրուկ Մնակեան Մանգիլեան Նկարները՝ Antranik Photography

## Համագայիցի «Սանահին» մասնաճիւղի Փոքրերու պատմութեան ժամ

Ուրբաթ, 15 Փետրուար 2019-ին տեղի ունեցաւ Համագայիցի «Սանահին» մասնաճիւղի «Գիրքը՝ մեր ընկերը, պատմութիւնը՝ մեր երեւակայութիւնը» նշանաբանով «Փոքրերու պատմութեան ժամ»ի աւանդական հաւաքը:

«Պատմութեան ժամ»ի փոխ-պատասխանատու Մեղրիկ Զէյթունլեան «Նստող ձուկը» ընթերցելով երեխաները փոխադրեց Յովհաննէս Թումանեանի երեւակայական աշխարհ, ուր անասունները խօսակցում կ'արտայայտեն իրենց մտածումները:

Թումանեանի բոլոր հեքիաթներուն ընդմէջէն պատգամ մը կայ քաղելիք: Երբ ձկնորսի օգնականը, օր մը, ազատ կ'արձակէ վարպետին նուիրած գոյնգոյն խօսող ձուկը, ձկնորսը գինք պաշտօնէն կ'արձակէ: Օգնականը զանազան փորձութիւններու կ'ենթարկուի, սակայն վերջապետութեան կը վարձատրուի ձուկին հանդէպ ցուցաբերած իր բարիացակամութեան համար:

Պատմութեան աւարտին բոլոր երեխաները տեղաւորուեցան սեղաններուն շուրջ եւ իրենց ճաշակով ու նախաիրած գոյներով գարգարեցին «Նստող ձուկ»ին պատկերը եւ պզտիկ փայտիկներով կազմեցին ձուկի թուղթէ խամաճիկներ:

Ձեզ անհամբեր կը սպասենք մեր յաջորդ հանդիպումներուն: «Փոքրերու պատմութեան ժամ»ը տեղի կ'ունենայ իւրաքանչիւր ամսուան երրորդ Ուրբաթը, Համագայիցի «Մուշկ Իշխան» գրադարանէն ներս, ժամը 6-էն 7-ը: Ձեր երեխաներն ու թոռները կրնան ընկերակցել մեզի եւ մեր ճոխ յայտագրին իրենց մասնակցութիւնը բերել հեռաձայնելով Մեղրիկին (514 826-1075) կամ գրելով հետեւեալ ե-հասցէին՝ megho7@hotmail.com:



Ռոզմարի Սահակեան

## Հակիրճ լուրեր Համագայիցիէն

Հինգշաբթի, Փետրուար 28-ին, կ. ե. ժամը 2:00-4:00-ի միջեւ, Manoir Gouin-ի տարեցներու տան մէջ, տեղի ունեցաւ «Հայ մշակոյթի օր», կազմակերպութեամբ ՀՕՄ-ի Մոնթրէալի «Սօսէ» մասնաճիւղի Տարեցներ Այցելող յանձնախումբին եւ Համագայիցի «Սանահին» մասնաճիւղին: Հայ եւ օտար ազգի բնակիչները վայելեցին հայկական աւանդական համեղ քաղցրեղէններն ու հայկական երգ ու պարի հարուստ մշակոյթը:

Հինգշաբթի, Փետրուար 28-ի երեկոյեան տեղի ունեցաւ այս տարեշրջանի «Սանահին» ֆիլմի ակումբի առաջին ցուցադրութիւնը, «Կէօնճեան» կեդրոնէն ներս: Ընկեր Լեւոն Գաբրիէլեան ներկայացուց «The Big Night» ֆիլմը, որմէ ետք ներկաները յայտնեցին իրենց վերլուծումները ֆիլմին մասին: Կուզենք ձեզի տեղեկացնել, որ ֆիլմի ակումբի հաւաքները տեղի պիտի ունենան իւրաքանչիւր ամսուան վերջին Հինգշաբթիին: Մեր յաջորդ հանդիպումը նախատեսուած է Հինգշաբթի, Մարտ 28-ին, երեկոյեան ժամը 7:30-ին:



Հինգշաբթի, Մարտ 7-ին, Համագայիցի «Նանոր» երգչախումբը, ընկերակցութեամբ խմբավարուհի ընկհ. Լուսին Ժամկոչեանի եւ վարչութիւնէն ընկհ. Թամար Շահինեանի, այցելեց Մոնթրէալի գիտութեան թանգարանը: Պատանիները հաճելի օր մը անցուցին եւ խաղերու միջոցաւ իւրացուցին գիտական տեղեկութիւններ: Անոնք առիթը ունեցան նաեւ դիտելու 3D ֆիլմ՝ ովկիանոսներուն եւ ծովային կենդանիներու մասին: Սոյն պտույտը կարելի եղաւ յաջողցնել շնորհիւ ՀՕՄ-ի Մոնթրէալի «Սօսէ» մասնաճիւղին վարչութեան տրամադրած նուիրատուութեան «Նանոր» երգչախումբին՝ առ ի գնահատանք Նոր Տարուան առթիւ ArMinion ձեռնարկին մասնակցութեան:

«Սանահին» մասնաճիւղի վարչութիւն

# Սփիւոքը Հայաստանէն Կազմակերպելու Փորձերը Դատապարտուած ԵՆ Զախողութեան ՀՅԴ Բիւրոյի Գերկայացուցիչ Յակոբ Տէր Խաչատուրեան

Ստորեւ կը ներկայացնենք ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ ընկ. Յակոբ Տէր Խաչատուրեանի Լոս Անճելըսի մէջ ՀՅԴ օրուան տօնակատարութեան ընթացքին փոխանցած խօսքին երկրորդ եւ երրորդ կէտերէն հատուածը: Առաջին բաժինը լոյս տեսած է «Հորիզոն»ի Մարտ 4-ի թիւին մէջ:

Կասկած չկայ, որ ՀՅԴի եւ Հայ Դատի օրակարգը հարստացած է այս վերջին երեսուն տարիներուն Հայաստանի օրակարգով, որ առաջ չունէինք. ունէինք՝ որպէս սկզբունք, ունէինք՝ որպէս տեսլական, ունէինք՝ որպէս երգ, բայց չունէինք որպէս որոշակի իրակացութիւն, որուն մենք մասնակցելու, որուն մէջ մենք բաժին վերցնելու դերը պիտի ստանձնէինք ահապատկ երեսուն տարիներէ ի վեր: Խորհրդարանէն ներս թէ դուրս, ՀՅԴի առաքելութիւնը կը շարունակուի, խորհրդարանէն ներս թէ դուրս Հայաստանի մէջ: ՀՅԴն այն քիչ քաղաքական ուժերէն է, որ միանձնեայ ղեկավարութեան շուրջ չէ հաւաքուած, գաղափարի կուսակցութիւն է, իր ազգային դիմագիծով, ընկերվարական հակումով, իր յեղափոխական նկարագրով, եւ իր ապակեղոնացեալ սկզբունքով: Այս մեծ կազմակերպութիւնը այսօր պատրաստ է տարբեր ձեւերով աշխատելու Հայաստանի քաղաքական կեանքէն ներս, եւ ուրախ եմ ըսելու, որ ՀՅԴ Բիւրօն եւ Հայաստանի Գերագոյն մարմինը միասնաբար մշակած են ծրագիր, որ արդէն իսկ գործադրութեան կը դրուի այսօր, կամաց կամաց գարգացնելու համար այն ալընտրանքային կառավարութեան գաղափարը, ուր 11 մասնագիտացած յանձնախումբեր կը գործեն, այլազան նախարարութիւններու աշխատանքները կ'ուղղուին «չափազանց» հասկացողութեամբ, ուր կարեւորն ոչ թէ միայն քննադատել, այլ այլընտրանքային ծրագիրներ առաջադրել: Մեր հիմնական նպատակը, ինչպէս որ փոխանցած ենք Հայաստանի իշխանութիւններուն, այն է, որ որպէս կառուցողական ընդդիմութիւն, եւ կը շեշտեմ բառին վրայ, որպէս կառուցողական ընդդիմութիւն, մենք պատրաստ ենք շիտակին ըսել շիտակ, սխալին ըսել սխալ: Մենք մեծապէս կը գնահատենք այն պայքարը, որ կը տարուի (ի նպատակով) ժողովրդավարութեան ամրապնդման, եւ (ընդդէմ) կաշտակերութեան, բայց այդ մտահոգութիւններու շարքը նկատի առնելով՝ կ'ուզենք անցնիլ մեր երկու այլ կէտերուն, որոնք մտահոգութիւններ են՝ մէկ մասը իրականացած, դժբախտաբար:

Եթէ մեր առաջին մտահոգութիւնը Արցախի հիմնահարցն էր, Արցախի իշխանութիւններուն հետ մեր խորհրդակցութիւններէն բխած մտահոգութիւններ են, Հայաստանի իշխանութեանց տարբեր օղակներուն մեր փոխանցած մտահոգութիւններն են, այլազան նախարարութիւններու հետ մեր ծրագիրներու գործադրութիւնն է, անդին կայ մէկ երկրորդ կարեւոր, յստակ առաջադրանք, որ կը կոչուի ազգային գաղափարախօսութիւն, ազգային արժէքներ: Պարոն վարչապետին հետ մեր խօսակցութեան ընթացքին, յատկապէս նշեցինք, որ ասոնք կարմիր գիծեր են ՀՅԴի համար, ազգային գաղափարախօսութիւնը իր դրօշն է, ազգային գաղափարախօսութիւնը Հայաստանի Հանրապետութեան օրհներգն է, ազգային գաղափարախօսութեան մաս կը կազմէ մեր մշակոյթի հայկական դիմագիծ ունենալը, մեր դարաւոր պատմութեան հայկական դրօշը, մեր ազգ-բանակ հասկացողութիւնը, եւ այդ, մեր եկեղեցւոյ, Հայաստանեայց առաքելական եկեղեցւոյ սիւները անսասան պահելու առաքելութիւնը: Ուրիշ ձեւ կարելի չէ պատկերացնել Դաշնակցութեան պարագային, ուրիշ ձեւ կարելի չէ ենթադրել, որ մենք ամէն գնով չենտուրիք այս նուիրական աշխատանքին մէջ, նաեւ կոչ կ'ընենք Հայաստանի իշխանութիւններուն, որ բազում մարտահրաւէրներու այս ժամանակաշրջանին, հայկական սրբութիւններուն չզոյնան: Կը հաւատանք, որ մի քանի անձերու նախաձեռնութիւն են այս վերջին խեղդատակութիւնները, իշխանութեան պաշտօնական քաղաքականութիւնը չեն, եւ յուսանք որ այդ ուղղութեամբ պէտք եղած քայլերը կ'առնուին, որ միանգամընդմիջտ արհեստական հարցերով չբարդինք:

Երրորդ մտահոգութիւնը, որ ներկայացուցած էինք, այն է, որ շատ լսեցինք վերջին շրջաններուն հայրենիքի մէջ, սեւի եւ սպիտակի պատմութիւն, շատ լսեցինք ներսի եւ դուրսի դաշնակցականներ, շատ լսեցինք բազմաշերտ, ժողովուրդը բաժան-բաժան ընելու մտադրութիւններ: Ես պաշտօնապէս կը յայտարարեմ, որ ոչ ներսի դաշնակցական կայ, ոչ դուրսի դաշնակցական կայ, կայ մէկ տեսակի դաշնակցական, որ իր երդումով կը ծառայէ Հայաստանին եւ հայութեան ազատագրութեան դատին: Եւ երբ, պարոն վարչապետի, որ լաւ գնահատեց, ՀՅԴի դերը, ըսինք, որ ասիկա պէտք է

ընդունինք որպէս կարմիր գիծ, եւ եթէ ընտրութիւններու ընթացքին կը պատահին այսպէս կոչուած ժխտական ընտրաշաւներու ժամանակ, (հիմա) ընտրութիւնները աւարտած են, այդ էջը պէտք է փակել, որ եթէ ընտրապայքարի թէժ միջոցառումներ մէջ անպատասխանատու խօսքեր կ'արտասանուէին, այսօր գանոնք կրկնելու իրաւունքը չունին: Այսօր, մենք նոր էջ պիտի բանանք Հայաստանի համար, որովհետեւ խանդավառուած ենք, որ այս ժողովրդային շարժման, «թաւաշայ յեղափոխութեան» միջոցաւ եկած առիթները յոյս ներշնչեցին մեր ժողովուրդին եւ մեր բոլորին պարտականութիւնն է, որ այդ յոյսը չմարի, եւ ատոր համար բոլորս մէկ պէտք է աշխատինք, որպէսզի ստեղծենք միջավայր, ստեղծենք ծրագիրներ, որոնք իրապաշտ են, իրագործելի են եւ կը միտին մէկ քայլ յառաջ տանելու մեր ժողովուրդին: Ատոր համար խնդրեցինք, որ նշածողերը այնքան բարձր չըլլան, որոնց վրայէն ցատկելը անկարելի թուի: Ատոր համար պէտք է զգուշացնուիմք մտենալ բացարձակ եւ ամբոխավար այն յայտարարութիւններուն, թէ մենք պիտի տանք տնտեսական բեկումնային աճ, երբ որ պիտուծէներուն մէջ քուէարկած ենք հինգ տոկոս միայն, եւ հաւաքով անկումներէ ետք Հայաստանի տնտեսութեան հինգ տոկոսը բեկումնային կարելի չէ նկատել:

Յեղափոխութիւն կազմակերպելը մէկ բան է, կառավարութիւն վարելը ուրիշ բան է: Հիմա այդ երկրորդ հանգրուանին մէջ ենք: Հիմա այս երկրորդ հանգրուանին մենք ազգովին պէտք է բռնցքուինք, համահայկական կազմակերպութիւններով, Հայաստանի կառավարութեամբ, Արցախի կառավարութեամբ եւ հայապատկան հողերու վրայ ապրող եւ Զաւախքի հայութեան համախմբումով, որպէսզի այն պատմական առիթը, որ տրուած է մեզի Հայաստանի անկախութեամբ, որեւէ ձեւով չմսխենք, այլ հզօրացնենք մեր հայրենիքը, Սփիւռքի ամբողջ ուժակներով կ'օգտագործելով, որովհետեւ կը հաւատանք, որ յանձնառու Սփիւռքը լաւագոյն գրաւականն է հզօր հայրենիքի: Եւ փոխադարձաբար՝ յաջող, գարգացող, հպարտ Հայաստանը, լաւագոյն պահպանեն է հայկական դիմագիծ ունեցող Սփիւռքին:

Ուրախ եմ ըսելու, որ Սփիւռքի մէջ, հոս են նաեւ մեր այլ քաղաքական կուսակցութիւններու գործընկերները, որ Սփիւռքի մէջ մենք իրենց հետ, համահայկական կառույց ունեցող միւս կազմակերպութիւններուն հետ, ըլլա՛յ բարեգործական, ըլլա՛յ Հայաստանեայց առաքելական եկեղեցի, ունինք քաղաքական փորձ, միասնաբար հաւաքուելու, միասնաբար նշելու, միասնաբար հասցէ ճշդելու, որ որեւէ մէկ Հայաստանի կառավարութիւն, ինչպէս անցեալին՝ այսօր ալ չկրկնէ, որ չի գիտեր հասցէն Սփիւռքին: Սփիւռքի հասցէն իր միացեալ կազմակերպութիւններու հասցէն է, Սփիւռքի հասցէն ազգային գաղափարախօսութեան շուրջ հաւաքուած այդ բոլոր կազմակերպ Սփիւռքն է: Որեւէ այլ կերպի փափաք թէ պէտք է Հայաստանէն կազմակերպուի Սփիւռքը, արդէն իսկ հիմնականը կը յայտարարեմ, որ դատապարտուած է ձախողութեան:

Հայրենիքը, Հայաստանը մեր միտքերուն եւ սիրտերուն մէջ տեղ ունի: Բայց հայրենիքը կարելի չէ, որ թելադրէ: Սփիւռքը իսկապէս տարբեր տարիներու վրայ տարածուած, մեծ հողովոյթէ անցած մէկ իրականութիւն է. սփիւռքները, դասական Սփիւռքը, որուն մաս կը կազմենք մենք, եւ նոր Սփիւռքը, որ ընդհանրապէս վերջին երեսնամեակին Հայաստանէն արտագաղթածներու հոծ զանգուածներէն կազմուած է, այդ սփիւռքները երկուքն ալ իրենց իւրայատուկ դերը ունին: Մեր պարտականութիւնն է, որպէս ՀՅ Դաշնակցութիւն, որպէս որեւէ այլ քաղաքական կուսակցութիւն, որպէս Հայաստանեայց եկեղեցի, այլ յարանուանութիւններ, որպէս համահայկական կառույց ունեցող կազմակերպութիւններ, որ մենք համախմբուինք, գործենք համախոհ, ճշգրէք յստակ նպատակներ, եւ գանոնք իրականացնելու միջոցները մենք մեր մէջ բաժնուինք, որպէսզի ազգովին կարենանք դիմագրաւել մեր դէմ ծառայած մարտահրաւէրները, որոնց մասին խօսեցանք:

Կասկած չկայ, որ այդ մարտահրաւէրներուն մաս կը կազմէ նաեւ Զաւախքի իրավիճակը: Այսօր ՀՅԴն միակ կազմակերպութիւնն է, դժբախտաբար, դժբախտաբար կ'ըսեմ, որովհետեւ հայկական այլ կազմակերպութիւններ, նոյնիսկ Հայաստանի պետութիւնը ակելի կրնան ընել եւ պէտք է ընեն, որովհետեւ Զաւախքը չափազանց կարեւոր մէկ իրողութիւն է, Զաւախքի հայութեան իրաւունքները պէտք է մեր բոլորին ուշադրութեան առարկան դառնայ, եւ Զաւախքահայութեան օժանդակութեան ծրագիրները փոքր քանակներէն պէտք է վերածուի ընդհանուր համահայկական հոսանքի: Մեծ ուրախութեամբ կ'ուզեմ նշել, որ մեր ուղեկից

կազմակերպութիւնները մեծապէս աշխոյժ են Զաւախքի մէջ: Հայ Օգնութեան Միութիւնը ունի իր կեդրոնները, ունի իր բժշկական սարքաւորումները, ստեղծած է այլազան միջոցներ, որպէսզի նուազագոյն պայմաններ կարենանք տրամադրել մեր Զաւախքի քոյրերուն եւ եղբայրներուն, որպէսզի անոնք ամբողջ կառնած մնան իրենց հողին: Եւ սա պարտականութիւնն է նաեւ Վրաստանի (իշխանութիւններուն), որ որպէս Եւրոպական Միութեան անդամ՝ ըլլալ ձգտող երկիր, ստիպուած է յարգել ազգային փոքրամասնութիւններու իրաւունքները եւ ատոր ամէնէն ցայտուն օրինակը Զաւախքի մէջ բնակող հայութիւնն է:

Մեր ժողովներուն ընթացքին շատ խօսուեցաւ երիտասարդացման մասին, հոյակապ նիւթ, մեր հոյակապ երիտասարդութեան համար, որ մեզի ամէնուրեք յոյս կը ներշնչէ: Իմ բոլոր այցելութիւններուն ընթացքին, ամէն տեղ կը տեսնեմ յանձնառու երիտասարդութիւն, յանձնառու պատանիներ, որոնք իրենց ժամանակը, իրենց քրտինքը, եւ եթէ պէտք ըլլալ իրենց արիւնը կը խառնեն մեր ժողովուրդի նպատակներու իրագործման գործին մէջ: Մեր մեծագոյն հարստութիւնն է այդ երիտասարդութիւնը, որովհետեւ ինչպէս մեր ծնողները մեզի կ'ըսէին. Ձեզի կը փոխանցենք երազ, ձեզի կը փոխանցենք ազատ, անկախ, միացեալ Հայաստանի տեսլականը, բայց սիրելի տղաս, սիրելի աղջիկս, ես չեմ գիտեր եթէ պիտի կարողանամ տեսնել, յուսամ որ դուն կը տեսնես»: Տարօրինակօրէն, մենք հանդիսացանք այն բախտաւոր սերունդը, որ գոնէ այդ տեսլականին մէկ մասը իրականացած գտաւ, ազատ ու անկախ հայրենիք, որքան ալ վիրաւոր, բայց ճամբայ ելաւ: Հիմա մեր կարգին, մենք մեր երիտասարդութեան պէտք է ըսենք, որ դուն պիտի դաս, պիտի լեցնես այն ղեկավար դիրքը, որ կամաւոր պատասխանատուութիւն կ'ենթադրէ, որ ծանր բեռ կ'ենթադրէ, որ առողջութիւն քանդել կ'ենթադրէ երբեմն, բայց որ քաղցր լուծ է, եւ բոլորիս պարտականութիւնն է, որովհետեւ այդ ձեւով միայն մենք կրնանք վստահեցնել, կրնանք ապահովել մեր ժողովուրդի յաւերժականութիւնը եւ մեր հայրենիքի գարգացումը:

Սիրելի երիտասարդներ, դուք ոչ միայն մեր ապագան էք, այլ նաեւ պէտք է հանդիսանաք մեր ներկան, որուն համար դուք այսօր իսկ պէտք է մաս կազմէք մեր բոլոր ղեկավար մարմիններուն:

Ուրախ եմ ըսելու, որ երկու հիմնական ուղղութեամբ Ընդհանուր ժողովը մեր այդ ղեկավարութիւնը թարմացնելու որոշում տուաւ. մէկը երիտասարդութեան հարցն էր, միւսը, մեր ընկերուհիներու, հայ կնոջ քաղաքական դերի բարձրացումն էր: Ես կ'ուզեմ պաշտօնապէս խոստանալ ձեզի, որ թէեւ տակաւին կանուխ է, այսօր մեր ընտրութեան եղաւ մէկ ամիս, որուն ընթացքին մեծ ծրագրումներու սկսած ենք, բայց կը խոստանամ, որ այս երկու երեսները Ընդհանուր ժողովի որոշումին՝ երիտասարդութեան ներգրաւման եւ հայ կնոջ դերի շեշտաւորման, յստակ կիցակէտը պիտի հանդիսանան այս նորընտիր Բիւրոյին:

Մենք ուրախ ենք նաեւ շեշտելու, որ կ'ապրինք ուրիշ բախտորոշ ժամանակ մը, Արեւմտահայաստանի մէջ թաքուն հայերու գարթօնքի շրջանը: Մեր հողերուն վրայ բնակող փոքրամասնութիւններու հետ յարաբերութեան շատ ակելի մակարդակի բարձրացում, ուրախ ենք ըսելու նաեւ, որ քաջ ձայներ կը հնչեն նոյնիսկ Թուրքիոյ մեծ քաղաքներէն, որոնք ըլլա՛յ Յեղասպանութիւն, ըլլա՛յ երբեմն պահանջատիրութիւն կը հնչեցնեն: Ուրախ ենք ըսելու, որ հակառակ ամէն տեսակի Եւրոպայի կառավարութեան ճնշումներուն, հայ ժողովուրդի՝ իր արմատներուն վերադարձի ձայնը, իր արմատներուն վերադարձի խիղճը կարելի չէ եղած խեղդել: Այսօր, հոն կը բնակի բաւական ստուար թիւով հայութիւն. մէկ մասը կորսուած նկատուող, մէկ մասը խառն, որ այսօր անոնք կը բռնեն վերադարձի ճամբան, ոչ այն թիւերով, որ մենք պիտի ուզէինք տեսնել, բայց ամէն ինչ սկիզբ ունի եւ կաթիլ կաթիլ է, որ երբեմն ովկիանոսներ կը կազմուին:


Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Միացեալ Հայաստանի գաղափարը կարելի չէ միայն տեսլական վիճակի մէջ պահել, ոչ միայն վարկածի վիճակի մէջ պահել, ատոր համար վերջին շրջաններուն մենք նախաձեռնած ենք նաեւ, որ (հետապնդենք) երկու հիմնական նպատակակէտ. առաջինը այն իրաւական հիմնարկն է, զոր ստեղծեցինք, կեդրոնը հոս է, ձեռք երկրին մէջ, Ուաշինկթըն, որ պիտի ուսումնասիրէ Յեղասպանութեան հետեւանքներու վերացման, անհատական եւ հաւաքական պահանջատիրութեան իրաւական երեսները: Այդ ուղղութեամբ ուրախ եմ ըսելու, որ Հայ իրաւաբաններու միութիւնը, որ կը գործէ Քալիֆորնիոյ












Հովանաորութեամբ  
 Քերաշնորհ Տ. Բարգէն Արք. Չարեանի  
 Առաջնորդ Գանատայի Հայոց Թեմի



**«ՀՈԳԵԻՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ»**  
 ՀԱՄԱՆՈՒԱԳԱՅԻՆ ՀԱՆԴԵՍ  
 ՆՈՒԻՐՈՒԱԾ ԿՈՄԻՏԱՄԻ ԾՆՆԴԵԱՆ 150-ԱՄԵԱԿԻՆ  
 Համագործակցութեամբ՝  
 «Orchestre Symphonique de Laval»-ի  
 և  
 Գանատայի Հայոց Թեմի Ազգային Առաջնորդարանի

Կատարման Հովանաորներ՝  
 Տիկին Շարլ Կէօնճեան  
 Տիար Մանուկ Չոխաճեան  
 «Բաստրման» Հիմնադրամ  
 Տէր և Տիկին Անտիս և Մարալ Թաշճեան

Չորեքշաբթի, 27 Մարտ 2019-ին, ժամը 19.30-ին  
 «Salle André-Mathieu»-ի մէջ

Տոմսերու համար Հեռաձայնել  
 Ազգային Առաջնորդարան՝ 514-856-1200

**COMFORTABLE. STYLISH. FUEL EFFICIENT. CHECK, CHECK AND CHECK.**



The all-new 2019 RAV4 FWD LE

From **\$91.42** /week  
60-month lease  
260 payments

MSRP starting from **\$30,304**

Image for illustration purposes only.

Conditions may apply. Total Annual Km: 20,000 km. \*Prices and weekly payments are estimates only. Actual amounts may vary. The displayed price includes Freight & PDI of \$1,1815 towards the 2019 Toyota RAV4 FWD LE, Air Conditioning Charge of \$100 if applicable and Dealer Fees of up to \$399. For full and accurate vehicle availability and a detailed quote, please contact Toyota Gabriel St-Laurent dealer.





**Պիտեղք Սեմ Բարադանայեանին լրացրին  
 ապաստիւթեան հարկար**  
**Sam Karadanaian**  
 Product Consultant  
 Tel: 514 748-7777 Ext.: 3810  
 skaradanaian@toyotagabriel.com

3333, ch. de la Côte-de-Liesse  
 Saint-Laurent, Québec, H4N 3C2  
**514 748-7777**  
 toyotagabrielstlaurent.com  
**« OPEN SATURDAYS »**



**Gift Voucher** \$200\*

\*Upon purchase or lease of a new 2019 Toyota. Offer can be modified or cancelled at any time. Cannot be combined with another offer. No cash value. Offer expires end of February 2019. Contact dealer for details.

# Հորիզոն

ՇԱՐԱԹՎԱԹՆՐԹ



## Օգոստոս 23 - Սեպտեմբեր 6

Միացե՛ք «Հորիզոն»ի 2019-ի Հայաստան-Արցախ-Համշեն-Անի շրջապտոյտին

*2019 Սեպտեմբեր 2-ին Ստեփանակերտի մեջ Արցախի մեր քոյրերուն եւ եղբայրներուն հետ միասին տօնենք Արցախի անկախութեան տարեդարձը*

Տեսարժան վայրերուն մէջ ընդգրկուած են՝  
Դադիվանք, Գանձասար, Սեւանայ լիճ, Քարվաճառի անտառներ...  
Այցելութիւն Հայկական Բանակի զօրանոց  
Այցելութիւն Անիի պատմական հայկական տաճարներ  
Այցելութիւն Համշենի պատմամշակութային վայրեր...

Թոյլք, կեցութիւն, օրական երեք ժամ ուտեստեղէն ապահովուած  
All Inclusive package

Գին՝ \$3950.00 Double Occupancy | \$4150.00 Single Occupancy Մուտքի վիզաները ներառեալ չեն  
Արձանագրուելու համար հեռաձայնել «Հորիզոն»ի գրասենեակ՝ 514 332-3757 թիւին



# Հայաստան, Արցախ, Համշեն և Անի շրջապտոյտ - 2019

## Օգոստոս 24

- Ժամանակ Երևանի «Ձուարթնոց օդակայան»
- Տեղանկալում Երևան
- Իջևանում Ավիատրանս (Aviatrans) հիւրանոց, Երևանի Հանրապետության հրապարակին մօտ
- Ընթրիք հիւրանոցին մեջ

## Օգոստոս 25

- Նախաճաշ հիւրանոցին մեջ
- Մեկնում էջմիածին և մասնակցություն Ա. էջմիածինի Մայր Տաճար կիրակնօրնայ եկեղեցական արարողություն
- Այցելություն «Էջմիածինի գանձեր» թանգարան
- Ճաշ էջմիածնի մեջ
- Այցելություն Զուարթնոց հնագիտական եկեղեցի-ուշարձան
- Վերադարձ Երևան
- Ընթրիք
- Հայկական ազգագրական պարերու երկեր

## Օգոստոս 26

- Նախաճաշ հիւրանոցին մեջ
- Այցելություն Խոր Վիրապ Արբալայք
- Ճաշ Արենի գիւղին մեջ
- Արենի գիւղի գինիի գործարան այցելություն և գինիի համուտում
- Վերադարձ Երևան
- Ընթրիք
- Գիշերային հայկական ճաշ երաժշտություն երկեր

## Օգոստոս 27

Ազատ օր Երևանի մեջ

## Օգոստոս 28-29-30

Համշեն և Անի

## Օգոստոս 28՝ ԴՐԱՆՏԻ ԴԱՐՊԱՍՆԵՐԸ

- Մեկնումը Երևան, Կիւմրի, Բարա (հայ-վրացական անցակետ), Ախալքալաք,
- Թուրք-վրացական Աթթաշ-Կարձախ անցակետ (առանց երկար կանգառներու) / Երևանէն մինչեւ Թուրքիոյ սահման մօտ 6 ժամ
- Արտահան, Կուր գետ, Արտահանի բերդ
- Ճաշ Արտահանի մեջ
- Մեկ լիճ (Շաշառ)
- Տրեւի վանք
- Շաշառի բերդ
- Դոխախանայի եկեղեցի
- Ճորոխ գետ և Ճորոխ գետի ջրամբարներ,
- Հուպա (ընթրիք և գիշերել)

## Օգոստոս 29՝ ՀԱՍՏԷՆԻ ՀՐԱՇԱԼԻՔՆԵՐԸ

- Նախաճաշ հիւրանոցին մեջ
- Ձոյ կամուրջներ
- Մանջուկայի ջրվճ
- Ֆարթունա գետի կիրճ, Զամրիանշեն
- Ձի ամրոց
- Բալահովիտի ջրվճ
- Ճաշ Համշենի ճոշատեւակներ և թէլ
- Այդերի կայա, ազատ ժամանակ
- Հոպա (գիշերել)

## Օգոստոս 30՝ ԵԱՐՈՒՆԱԿԵԼՈՎ ՀԵՔՐԱԹԸ

- Նախաճաշ հիւրանոցին մեջ
- Բորչկայի գաւառակ,
- Արդուին քաղաքի և Ճորոխ գետի համայնապատկեր
- Ճաշ Կարսի մեջ
- Կարճ պտուղ Կարսի մեջ
